ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 33-Ա
«04» ՓԵՏՐՎԱՐ 2022Թ

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐԻ ՅՈՒՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Արփիի Վ.Լևոնյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն», «Վայոց ձորի մարզի Ագարակաձորի Յուրա Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն», «ՀՀ Վայոց ձորի մարզի Մոզրովի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի /Մ-9593-2021/ / գրությամբ ներկայացրած փաթեթը և Նաիրա Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի փետրվարի 7-ից Նաիրա Հովհաննիսյանին նշանակել «Վայոց ձորի մարզի Ագարակաձորի Յուրա Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց

պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2022 թվականի փետրվարի 7-ից լուծել Նաիրա Հովհաննիսյանի հետ կնքած 2017 թվականի փետրվարի 6-ի N359 աշխատանքային պայմանագիրը:

2/4/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ